ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

1.ՀՀԱրմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /ծածկագիր 1.2-1:

Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ ռազմավարական և կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, լուծում աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան /կոչում/ կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտականաստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

- Սույնպաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարած մրցույթը կկայանա 2016թվականի մարտի 4-ին ժամը 14:00-ին Տանձուտի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիներըՏանձուտի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
- Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի /պաշտոնները/ բնօրինակների հետ միասին.
- Հայտարարությունայն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011թ-ի դեկտեմբերի 15-ի համար N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

- Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- Արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.
- մեկլուսանկար 3*4 չափսի.
- Անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտի համայնքապետարան(գ. Տանձուտ, 1-ին փողոց, 26 շենք)կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ(հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռախոս՝ /0237/-2-07-70, 2-76-49)հարցերով վարչություն:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի փետրվարի 17-ը: